ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2022 թվականի N 175-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 07-Ի N 182-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված կարգի 19-րդ կետի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի հունիսի 07-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին»* N 182-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման N 1 հավելվածի՝

ա. 1-ին կետում՝ «Հրազդանի N 2 հիմնական դպրոց» բաժնում ***«Մերի Սուքիասյան»*** բառերը փոխարինել ***«Անի Բաղդասարյան»*** բառերով,

բ. 6-րդ կետում՝ «Հրազդանի Պ. Սևակի անվան N 8 հիմնական դպրոց» բաժնում ***«Վահագն Նազլոյան»*** բառերը փոխարինել ***«Անի Բաղդասարյան»*** բառերով,

գ. 26-րդ կետում՝ «Արամուսի Վ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց» բաժնում ***«Հրաչյա Վարդանյան»*** բառերը փոխարինել ***«Հովիկ Սարգսյան»*** բառերով,

2) որոշման N 2 հավելվածի 15-րդ կետում՝ «Կամարիսի Ազատ Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց» և «Մայակովսկու Հ. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» բաժիններում ***«Հովիկ Սարգսյան»*** բառերը փոխարինել ***«Հրաչյա Վարդանյան»*** բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ սույն որոշման մասին իրազեկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի N 2 հիմնական դպրոց», «Հրազդանի Պ. Սևակի անվան N 8 հիմնական դպրոց», «Արամուսի Վ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց», «Կամարիսի Ազատ Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց» և «Մայակովսկու Հ.

Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի մայիսի 20
ք. Հրազդան